Հնութիւնների աւերակները եւ մարդիկների գերեզմանները իմ վրայ միշտ միեւնոյն տպաւորութիւնն են գործել։ Երկուսի մէջ եւս տեսնւում է դադարած կեանքը, երկուսն էլ յիշեցնում են անցեալը, որ մի ժամանակ ապրել են, գործել են եւ, ժամանակի հետ քսոելով, մաշոել ու մեռել են, թողնելով միայն կենդանի յիշատակներ։ Մարդ, նայելով իր նախահարց գերեզմանների վրայ, մի առանձին հպարտութիւն է զգում, երբ մտաբերում է, որ նրանք իրանց ժամանակի ամենալաւ մարդիկն են եղել։ Գերեզմանի մէջ անգամ նրանց փոշիները պահպանում են վաղեմի վեհութիւնը։ Աւերակների փոշիների մէջ եւս ապրում է անցեալ մեծութիւնը, որ միեւնոյն հպարտութիւնը եւ միեւնոյն քաջալերութիւնն է ազդում ապագայ սերունդի մէջ։ Աւերակների փոշիներից է կազմոած այն շաղախը, որ միացնում է ներկայ սերունդի սրտերը նախահարց հետ։

Թօփրակ-կալէի լեռան մէջ նոյնպէս գտնւում են շատ այրեր, քարանձաւներ, ստորերկրեայ անցքեր, որպիսիները տեսանք Շամիրամի բերդի մէջ։ Դրանցից եւ ոչ մէկը բնական չէ, բոլորն էլ փորոած են ամենաամուր ժայռերի մէջ, եւ նրանց այժմեան գեղեցկութիւնը բաւական ապացոյց է, թէ որքան զարգացած է եղել այդ աշխարհում արհեստը։ Այրերից միայն մէկի մէջ մտանք մենք, որ կոչւում է Զըմփ-զըմփ-մարաղայ, այսինքն զըմփզըմփալով ձայն հանող այր։ Ամենաթեթեւ ձայնը այդ քարանձաւի մէջ զըմփզըմփալով արձագանք է տալիս։ Ժայռի մէջ բացւում է մի մեծ մուտք, որը հարիւրաւոր քարեայ սանդուղքներով իջնում է դէպի լեռան խորքը։ Քարի մէջ փորոած երկու լուսամուտներ վերեւից խիստ աղօտ լոյս են ձգում այդ ստորերկրեայ վիրապի մէջ։ Քարեայ սանդուղքի վերջին աստիճանի մի կողմում բացւում է մի ընդարձակ, քառակուսի այր, դա է, որ կոչւում է Զըմփ-զըմփ-մաղարայ։ Այդ այրի միջից մի առանձին անցք տանում է դէպի երկրի խորքերը. բայց ո՞ւր է գնում, որտե՞ղ է վերջանում, աստոած գիտէ։ Մեր առաջնորդը դարձեալ խօսում էր ստորերկրեայ ապարանքների մասին. ժողովրդի աւանդութիւնը նոյնն էր խօսում։ Այդ բոլորը տեսնելով, ես պատրաստ էի հաւատալ, որ այստեղ եղել է մի ստորերկրեայ աշխարհ, եւ այդ անցքերը տանում են դէպի այն աշխարհը։ Ասլանը այդ մասին ինձ ոչինչ չասաց. նա բոլորովին ուրիշ նպատակներով էր քննում այդ անցքերը։ Նա ցանկանում էր ստուգել, թէ որքա՜ն ուղիղ է այն կարծիքը, թէ այդ ստորերկրեայ անցքերը հաղորդակցութիւն ունեն քաղաքի մէջ գտնոող Շամիրամի բերդի հետ։ Այդ էր պատճառը, որ մեզանից ոչ մէկը չհամարձակոեցաւ Զըմփ-զըմփ-մաղարայից անցնել եւ առաջ գնալ, իսկ նա, վառելով իր հետ վերառած մոմապատը, շատ առաջ գնաց եւ վերադարձաւ համարեա մէկ ժամից յետոյ։